

681



ՀԱՅԱՏԱՌԻԱ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան  
« 18 » 06 2024թ

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 086 - 24

Նախաձեռնող՝

«ԿԱՊՈՒՅՏ ԱՎԱԶ» ՍՊԸ  
ք. Երևան, Մամիկոնյանց փողոց, 42-44

Գործունեությունը՝

Արմավիրի մարզի Եղեգնուտի ԱԿԽ-ի հանքավայրի «1-ին» տեղամասում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրություն  
*Մեծամոր համայնք*

Առդիր՝ 7 թերթ

ԲՓ № 086 - 24

«18» հունիսի 2024թ.

**Արմավիրի մարզի Եղեգնուտի ԱԿԽ-ի հանքավայրի «1-ին»  
տեղամասում երկրաբանական ուսումնասիրության  
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ**

Նախաձեռնող՝	«ԿԱՊՈՒՅՏ ԱՎԱԶ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Տեղադրման վայրը՝	Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք Զարթոնք բնակավայր

**Ներածական մաս.** Արմավիրի մարզի Եղեգնուտի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 1-ին տեղամասում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Նախատեսվող գործունեությունը՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի՝ (<Օ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի «ա» ենթակետի՝ դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է բացահայտել տեղամասի արդյունաբերական նշանակությունը, ավազի որակական հատկանիշները որպես հումք շինարարական խճի և ավազի համար:

**Նկարագրական մաս.** Եղեգնուտի հանքավայրի 1-ին տեղամասը գտնվում է Արմավիրի մարզում, Եղեգնուտ գյուղի կենտրոնից դեպի հյուսիս-արևմուտք 2.1 կմ հեռավորության վրա, Արևիկ գյուղի կենտրոնից 4.1 կմ դեպի արևելք և Մրգաշատ գյուղի կենտրոնից 7.0 կմ դեպի հարավ-արևելք, 843.6-846.2 մ բացարձակ բարձրությունների վրա: Եղեգնուտ բնակավայրի մոտակա բնակելի տարածքները տեղամասից գտնվում են մոտ 1.2 կմ, Զարթոնք բնակավայրի շինությունները՝ 0.47 կմ, Արտաշար բնակավայրի շինությունները՝ 2.1 կմ հեռավորությունների վրա: Եղեգնուտի տարածքը տեղակայված է Արաքս գետի հին հարավային հունում, որը ձգվում է մոտ 11-12 կմ՝ 300-400 մ լայնությամբ՝ արևելքում և մինչև 500-600 մ լայնությամբ կենտրոնական և հարավ-արևմտյան հատվածներում: Զարթոնք գյուղի շրջանում՝ մոտ 11-12 կմ և 200-ից մինչև 600 մ լայնությամբ դիտարկվում է Արաքս գետի հին հունը: Հայցվող տարածքի շրջակայքում առկա են բազմաթիվ լճակներ, ջրակալված տարածքներ, որոնք առաջացել են Արաքս գետի հին հարավային հունից ավազակոպճային խառնուրդի արդյունահանման



աշխատանքների արդյունքում: Արհեստական ծագման ջրային տարածքները առանձին հատվածներում սահմանակից են հայցվող տեղամասին:

Տարածքի աշխարհագրական կոորդինատները հետևյալն են՝

հյուսիսային լայնության- 40°06'15"

արևելյան երկայնության- 44°08'37"

Տարածքի ծայրակետերի կոորդինատները՝ ARMWGS-84 միասնական համակարգով հետևյալն են՝

1. Y=8426643.83	X=4440927.77
2. Y=8426607.23	X=4440959.50
3. Y=8426441.78	X=4441004.88
4. Y=8426338.38	X=4441080.51
5. Y=8426450.82	X=4441167.08
6. Y=8426493.15	X=4441229.62
7. Y=8426571.06	X=4441396.63
8. Y=8426605.58	X=4441424.08
9. Y=8426735.91	X=4441469.78
10. Y=8426806.58	X=4441515.91
11. Y=8426868.38	X=4441598.60
12. Y=8426996.26	X=4441814.59
13. Y=8427310.06	X=4441889.55
14. Y=8427459.29	X=4441798.19
15. Y=8427400.00	X=4441772.37
16. Y=8427305.42	X=4441696.10
17. Y=8427394.43	X=4441596.36
18. Y=8427154.54	X=4441417.83
19. Y=8427014.59	X=4441322.96
20. Y=8426979.68	X=4441283.29
21. Y=8426914.72	X=4441234.22
22. Y=8426890.97	X=4441239.98
23. Y=8426775.99	X=4441093.85
24. Y=8426793.59	X=4441075.97
25. Y=8426739.66	X=4441020.41
26. Y=8426675.11	X=4440937.78

Համաձայն հայտի տեղեկատվության ուսումնասիրվող և հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը: Ուսումնասիրվող տարածքի մոտակայքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ, տարածքը անմիջական սահմաններ չունի ԲՀՊՏ-ների հետ:

Եղեգնուտի ավազների հանքերևակման տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը կազմվել է հաշվի առնելով տեղամասի երկրաբանական կառուցվածքը, մորֆոլոգիական ձևը, ուսումնասիրվող տարածքի չափսերը, հանքերևակման ավազաշերտի սպասվող հզորությունը, տեղամասի հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական պայմանները, տարածքի լեռնատեխնիկական պայմանները:

Համաձայն ուսումնասիրությունների ծրագրի տեղամասի 1:2000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ 39.1 հա տարածքի վրա, բոլոր հետախուզական փորվածքների և նմուշարկման տեղերի, ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ: Նախատեսվում է անցնել 19 հետախուզահող յուրաքանչյուրը 6,5 մ



խղրոթյամբ, ընդհանուրը 40 մ ծավալով կամ 741.0 խմ, այդ թվում 62.7 խմ այլովիալ-դեյուվիալ առաջացումներ, որից հողաբուսական շերտ 34.2 խմ: Ըստ ֆոնդային նյութերի տվյալների այլովիալ-դեյուվիալ առաջացումների ու հողաբուսական շերտի հզորությունը տեղամասում տատանվում է 0.45-0.83 մ սահմաններում, միջինը կազմում է 0.5 մ (բուն հողաբուսական շերտը՝ 0.3 մ): Հետախուզահորերը նախատեսվում է անցնել մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով V կարգի ամրության ապարներում: Մեկ հետախուզահորի մակերեսը կազմում է 6.0 քմ: Հետախուզահորերի զբաղեցրած ընդհանուր մակերեսը կազմում է 114.0 քմ: Դաշտային պայմաններում նախատեսվում է ուսումնասիրել ավազների բնական խտությունը (բնամասում), ծավալալիքային զանգվածը և փխրեցման գործակիցը: Աշխատանքները կիրականացվեն հետախուզահորերից հայտնի ծավալից հանված նյութի կշռման եղանակով: Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է տեղամասում անցած հետախուզահորերի 741.0 խմ ծավալից 60 խմ-ը օգտագործել կուտակի բնական խտության (բնամասում), ծավալալիքային զանգվածի և փխրեցման գործակցի որոշման համար: Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են անցած լեռնային փորվածքները՝ հետախուզահորերը: Փաստագրման աշխատանքները կկատարվեն առաջին կարգի երկրաբանի կողմից: Մասնակի մասնակցություն կունենան նաև գլխավոր մասնագետը: Երկրաբանական փաստագրման աշխատանքներ նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալը կկազմի 123.5 զժ.մ: Աշխատանքների ավարտից հետո, դաշտային պայմաններում ավազների բնական խտության (բնամասում), ծավալալիքային զանգվածի և փխրեցման գործակցի որոշումից ու նմուշարկման աշխատանքներից հետո նախատեսվում է հետախուզահորերի անցման ժամանակ հանվող 741 խմ ԱԿԽ զանգվածի նմուշարկումից հետո մնացած 740.81 խմ (0.19 խմ-ը նմուշների ծավալն է) ծավալով ԱԿԽ կուտակի հետլցնում: Աշխատանքները կկատարվու են ձեռքով, առանց լրացուցիչ ծախսերի: ԱԿԳԽ-ի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է հետախուզահորերից վերցնել նմուշներ: Նախատեսվում է վերցնել 25 նմուշ, այդ թվում 19 ակոսային նմուշ, 3 նմուշ քիմիական հետազոտությունների համար և 3 նմուշ միներալոպետրոգրաֆիական հետազոտությունների համար: Հանուկը կնմուշարկվի օգտակար հանածոյի ամբողջ հզորությամբ, ակոսային նմուշները՝ օգտակար հանածոյի ուղղահայաց և ամբողջ հզորությամբ: Ակոսային նմուշների չափսերն ընդունվում են 40x40սմ կտրվածքով: Յուրաքանչյուր նմուշի կշիռը բազմափուլ կրճատումից հետո նախատեսվում է հասցնել 15 կգ-ի: Վերցված նմուշները կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների մասնագիտացված լաբորատորիայում:

Քիմիական և միներալոգիապետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար նախատեսվում է համապատասխանաբար վերցնել 3-ական նմուշ: Հետազոտությունները կկատարվեն ՀՀ ԳԱԱ Երկրաբանական ինստիտուտում:

Հիդրոերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել հիմնական ջրատար հորիզոնները, եթե այդպիսիք կան դրանք ուսումնասիրել և նկարագրել, կատարել ռեժիմային դիտարկումներ և ուսումնասիրել ջրի որակը: Դիտարկումները նախատեսվում է կատարել ամիսը մեկ անգամ: Անհրաժեշտության դեպքում վերոհիշյալ ուսումնասիրությունները կկատարվեն մասնագիտացված կազմակերպությունների հետ համագործակցելով: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ կպահանջվի խմելու և տեխնիկական ջուր: Տեխնիկական ջուրը կապահովվի Արաքս գետի հին հունի տարածքում ձևավորված ջրային ավազաններից, իսկ խմելու և կենցաղային նպատակներով անհրաժեշտ ջուրը գնվելու է մոտակա բնակավայրերի խանութների շաղցված տարբերակով (5-6լ տարողությամբ տարաներով), տեղափոխվելու է տեղամասի տարածք աշխատանքները սպասարկող մեքենայով: Տեղամասի տարածքում և անցած հետախուզական փորվածքներում СРП-68-01 ռադիոչափիչ սարքով գամմա պրոֆիլավորման գամմա ակտիվության չափումների միջոցով, նախատեսվում է չափել ԱԿԽ կուտակի ռադիոակտիվությունը: Ծրագրով նոր





ճանապարհների կառուցում չի նախատեսվում, քանի որ տեղանքում գոյություն ունեն դաշտամիջյան գրունտային բարվոք ճանապարհներ և ընկերությունը կօգտվի այդ ճանապարհներից: Եթե աշխատանքների իրականացման ժամանակ գործող ճանապարհների որոշ հատվածներ քանդվեն, ընկերությունը կկատարվի մասնակի վերանորոգում, առանց լրացուցիչ ծախսերի: Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հորատահարթակների կառուցման ժամանակ հանել այլուվիալ-դեյուվիալ առաջացումները (91.2 խմ չափով, այդ թվում 57.0 խմ այլուվիալ դեյուվիալ նստվածքներ, 34.2 խմ հողաբուսական շերտ), առանձնացնել հողաշերտը և դրանք պահեստավորել առանձին-առանձին, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով հետ փռել այլուվիալ-դեյուվիալ առաջացումները, այնուհետև տարածքը ծածկել հողաբուսական շերտով: Ռեկուլտիվացիայի ենթակա ապարների ծավալը հաշվարկվում է տարածքի մակերեսից և վերականգնվում է միջինը 0.8 մ խորության վրա, որից 0.5 մ այլուվիալ-դեյուվիալ նստվածքներ, 0.3 մ հողաբուսական շերտ: Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր մակերեսը կազմում է 114 խմ: Հետախուզահորերի անցման ժամանակ առաջանում է 741 խմ լեռնային զանգված, այդ թվում 57.0 խմ այլուվիալ-դեյուվիալ առաջացումներ ու 34.2 խմ հողաբուսական շերտ: Այդ ծավալները կարճաժամկետ կուտակվում են խախտված տարածքների անմիջական հարևանությամբ առանձին-առանձին և աշխատանքների անմիջապես ավարտից հետո ամբողջությամբ կօգտագործվեն խախտված հողատարածքների վերականգնման համար: Երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ ժամանակավորապես օգտագործումից դուրս եկած հողերի ընդհանուր մակերեսը կազմում է՝ 114 քմ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ:

Հիմնական բնապահպանական ռիսկեր կարող են հանդիսանալ՝ հետախուզաառուների տարածքներում բուսականության ոչնչացումը, փոշու արտանետումները՝ հողային աշխատանքների արդյունքում, դիզելային վառելիքի այրման արգասիքների արտանետումներ, տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում առաջացող աղմուկը, ծանր տեխնիկայի շահագործման և կայանման ընթացքում վառելիքի և քսայուղերի արտահոսքերը, որոնց բացառման, նվազեցման ու փոխհատուցման համար նախատեսվել է բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները՝

- վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքների կատարում հարակից բնակավայրերում՝ համապատասխան ծառայություն մատուցող կայաններում,
- աշխատանքների ժամանակ կիրառվող սարքավորումների և աշխատանքները սպասարկող մեքենաների կահավորում ֆիլտրերով՝ արտանետումները կրճատելու նպատակով,
- փոշենստեցման նպատակով աշխատանքների տեղամասին մոտեցնող ճանապարհի ջրում՝ տարվա չոր և շոգ եղանակներին:

Տեխնիկական նպատակներով անհրաժեշտ ջուրը նախատեսվում է վերցնել Արաքս գետի հին հունի տարածքում գոյացած ջրային ավազաններից: Ըստ գործող նորմատիվների՝ 1 խմ տարածքի ջրցանման համար անհրաժեշտ տեխնիկական ջրի քանակը կազմում է 1,5 լ: Տեխնիկական ջրառ իրականացնելու համար նախատեսվում է դիմել շրջակա միջավայրի նախարարություն և օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ ջրօգտագործման թույլտվություն: Խմելու և կենցաղային նպատակներով անհրաժեշտ ջուրը գնվելու է մոտակա բնակավայրերի խանութների շալցված տարբերակով (5-6լ տարողությամբ տարաներով),





տեղափոխվելու է տեղամասի տարածք աշխատանքները սպասարկող մեքենայով: Աշխատակիցների կենցաղային պայմանների ապահովման նպատակով տարածքում բեռնարկղային տիպի վագոն-տնակի տեղադրում, որը կօգտագործվի որպես հանդերձարան և հանգստի սենյակ: Պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

Շրջանի կենսաբազմազանության պահպանության նպատակով Եղեգնուտի հանքավայրի 1-ին տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներին մասնակցող անձնակազմը անցնելու է հատուկ վերապատրաստում և ծանոթանալու է տարածաշրջանին բնորոշ՝ ՀՀ կենդանիների և բույսերի կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ: Աշխատակիցները պետք է հրահանգավորեն, ծանոթանան անվտանգության տեխնիկայի կանոններին: Հայցվող տարածքի պարագծով տեղադրվելու են նախագույնացնող նշաններ, ինչը թույլ կտա կանխել անվտանգության տեխնիկայի հրահանգավորում չհանդիպող մուտքը հայցվող տարածք: ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում: Նախքան հետախուզահորերի անցումը տեղամասի տարածքի դիտարկում՝ թռչունների կամ կաթնասունների բների, որջերի հայտնաբերման նպատակով: Դրանց դիտարկման դեպքում, մասնագետների մասնակցությամբ, բների տեղափոխում նմանատիպ լանդշաֆտային բնութագրեր ունեցող տեղամաս: Հետախուզահորերի տարածքների ռեկուլտիվացիայի և հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հորատահարթակների կառուցման ժամանակ հանել այլուվիալ-դեյուվիալ և հողի շերտը (91.2 խմ չափով, այդ թվում 57.0 խմ այլուվիալ դեյուվիալ նստվածքներ, 34.2 խմ հողաբուսական շերտ), առանձնացնել հողաշերտը և դրանք պահեստավորել առանձին-առանձին, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով հետ ցնել այլուվիալ-դեյուվիալ առաջացումները, այնուհետև տարածքը ծածկել հողաբուսական շերտով: Ռեկուլտիվացիայի ենթակա ապարների ծավալը հաշվարկվում է տարածքի մակերեսից և վերականգնվում է միջինը 0.8մ խորության վրա, որից 0.5մ այլուվիալ-դեյուվիալ նստվածքներ, 0.3 մ հողաբուսական շերտ: Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր մակերեսը կազմում է 114 խմ: Հետախուզահորերի անցման ժամանակ հանվելու է 91.2 խմ լեռնային զանգվածը ամբողջությամբ կօգտագործվի խախտված հողատարածքների վերականգնման համար: Աշխատանքները կատարվելու են ձեռքով, աշխատելու են 2 մարդ: Հետցման համար հատկացվում է 180.0 հազար դրամ:

Ավազակոպճային խառնուրդի հետախուզման ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները՝

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,

2. նավթամթերքներով արտադրական հրապարակի տարածքի աղտոտվածության մոնիթորինգ՝ ամսական մեկ անգամ,

3. Զարթոնք գյուղի մոտ աղմուկի մակարդակի չափումներ՝ տարեկան մեկ անգամ,

4. 1-ին տեղամասի և հարակից տարածքում կենսաբազմազանության դիտարկում: Վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում: Կենսաբազմազանության դիտարկումը կատարվելու է համապատասխան մասնագետների կողմից (բուսաբան, կենսաբան)՝ պայմանագրային հիմունքներով: Մշտադիտարկումների կատարման համար տարեկան նախատեսվում է մասնահանել 450.0 հազար դրամ:

**Պատճառաբանական մաս.** Օրենսդրությամբ սահմանված կարգով նախնական գնահատման և փորձաքննության փուլերում Արմավիրի մարզի Զարթոնք բնակավայրում անցկացված





հայրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Արմավիրի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել որ, շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվող տարածքի շրջակայքում նախկին ընդերքօգտագործման աշխատանքների արդյունքում առաջացել են բազմաթիվ լճակներ, ջրակալված տարածքներ, արհեստական ծագման ջրային տարածքներ՝ հետագայում հանքավայրի աղյուսահանման աշխատանքները կարող են առաջացնել էական բնապահպանական ռիսկեր՝ տարածքի ջրաէկոհամակարգերի սանիտարական գոտիների, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման համար, ուստի հետագա հանքարդյունահանման աշխատանքների իրականացումը չի երաշխավորում դրական փորձաքննական եզրակացության տրամադրումը:

### **Փորձաքննական պահանջներ**

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջներով՝ իրականացնելով նախնական գնահատման հայտով ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների՝ հողի, օդի, ջրերի, կենսաբազմազանության մշտադիտարկումներ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
3. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
4. Առաջնորդվել ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշման պահանջներով:
5. Անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:





6. Ապահովել և պահպանել բնապահպանական և մշտադիտարկումների ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը, բնապահպանական պահանջների կատարումը:

## ԵԶՐԱՓՈՒԿ ՄԱՍ

«ԿԱՊՈՒՅՏ ԱՎԱԶ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Եղեգնուտի ԱԿԽ-ի հանքավայրի «1-ին» տեղամասում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Վարդան Հարությունյան